ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 132

ք. Երևան 25.07. 2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/8» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02890282, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեղատան փ., 10շ., 6բն. (այսուհետ՝ նաև Մասնակից)): Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված 1-ի առաջին կետում նշված է, որ ««Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն իրեն փոխկապակցված անձիք բավարարում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին..»: Սակայն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից (այսուհետ՝ նաև Ծառայություն) 08.07.2024թ. ստացվել է թիվ Ե/1611-24 գրություն, համաձայն որի Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մաան» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02869057) 2023թ. փետրվարի 10-ից մինչև 2025թ. փետրվարի 10-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և որ «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանի և «Մաան» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանը 2022թ. հուլիսի 8-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Մաան» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 22.07.2024թ. N 03/26-1/15366-2024 գրությունը, որոշում եմ՝ «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ